ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2011թ. ,,Պետական բյուջեի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 01 բաժնի 01 խմբի 01 դասի 03 ծրագրի ,,4729 սոցիալական օգնություն դրամական արտահայտությամբ նպաստներ բյուջեից,, հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Մարզպետարանին հատկացված միջոցներից 40000 /քառասուն հազար/ դրամ հատկացնել ս/թ օգոստոսի 20-ից 24-ը Ծաղկաձորում կայանալիք ,,Բազե 2011թ,, հավաքին մարզի 7 մասնակիցների ճանապարհածախսը հոգալու համար համաձայն կից նախահաշվի:
2. Մարզպետի խորհրդական Օ. Չիչոյանին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել Հայաստանի Հանրապետության հիմնադրամի Գեղարքունիքի մարզային կենտրոնի ղեկավար Արծրուն Դվոյանինի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ